ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ ՎԱՐԴԱՆԻ

ԷՐԳՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ 00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
(Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ. Ռ. Հովյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ե. Ս. Հակոբյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ. Ռ. Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2019 թ. դեկտեմբերի 12-ին, ժամը՝ 12:00–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ.-ի հոկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թ. Յու. Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Այսօր, արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունը համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, մշակութային և համայնքային կյանքում, միաժամանակ, կանխելով նրանց՝ կրթական համակարգից դուրս մնալու խնդիրները: Չնայած, ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրումը և ուսուցումը կազմակերպվում են հատուկ ուղղվածությամբ, սակայն, 2010–2015թթ. ընթացքում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նման երեխաների ինտեգրման գործընթացը լիովին չի համապատասխանում սոցիալական վերականգնմանն ուղղված համապատասխան մեթոդների կիրառմանը (ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում 2013, Լ. Սարատիկյան 2013, Մ. Հարությունյան 2014):

Էրգոթերապևտիկ միջամտության նկատմամբ հրատապ հետաքրքրությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում պայմանավորված է սովորողների սոցիալական վերականգնմանն ուղղված էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների և յուրահատուկ մոդելի կիրառման կարևորությամբ (J. Benson 2013, AOTA 2016): Ուստի, կարևորում ենք այնպիսի միջամտության իրականացումը, ինչը թույլ է տալիս ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կիրառելու էրգոթերապևտիկ համալիր մոտեցումներ և կրթական կարիքի հաղթահարման համապատասխան միջոցներ (S. Kennedy, H. Stewart 2011, Զ. Հարությունյան, Գ. Հովյան 2013): Այս առումով, հատուկ ուշադրության պետք է արժանացնել էրգոթերապևտիկ այնպիսի միջամտության ձևերի և մեթոդների ընտրությանը, որոնք համապատասխան մեթոդիկայի կիրառման պայմաններում, կնպաստեն ԿԱՊԿՈՒ երեխաների լիարժեք ինտեգրմանը կրթական գործընթաց, ինչը լիովին կտարբերվի հանրակրթական դպրոցներում իրականացվող աշխատանքներից (M. Ainscow, A, Howes, P. Farrell, J. Frankham 2003, AOTA 2015b, M. Арутюнян 2017):

Մինչ այժմ ՀՀ-ում իրականացված Էրգոթերապևտիկ միջամտության ուղղվածությամբ գիտական ուսումնասիրություններն ու միջոցառումներն ուղղված են եղել մանկական ուղեղային կաթվածով երեխաների ինքնասպասարկման և կենցաղավարության հմտությունների հետազոտմանը և համապատասխան էրգոթերապևտիկ միջամտության ուղիների զարգացանը (Մ. Հարությունյան 2013): ՈՒստի, գոյություն ունեցող խնդրի լուծման համար անհրաժեշտ ենք համարում Էրգոթերապևտիկ միջամտության այնպիսի մոդելի ստեղծումը, որը կունենա ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեբանական, անձնային և ֆիզիկական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման համալիր ծրագիր՝ ներառելով նրանց զարգացման առանձնահատկությունները:

Նման ծրագրի իրականացումը թույլ կտա հայտնաբերել, գնահատել և համակարգել էրգոթերապևտիկ միջամտության կիրառման և ներդրման առավել արդյունավետ ուղիները և մոտեցումները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում (C. Christiansen, C. Baum, J. Bass-Haugen 2005, H. Polatajko, J. Davis, N. Cantin, C.-J.Dubouloz-Wilner, B. Trentham 2013):

Որպես ներառական հաստատություններում իրականացվող աշխատանքների բացառիկ նոր մոտեցում՝ էրգոթերապևտիկ միջամտությունը պահանջում է հատուկ մասնագետների սերտ համագործակցություն և խորհրդատվություն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու առավել նպաստավոր և սոցիալական միջավայրում հարմարվելու ուղիներ մշակելու համար (B. Hanft, J. Shepherd 2008, Մ. Արտյոնյան, Գ. Օվյան 2017): Էրգոթերապևտիկ միջամտությունը նպաստում է նաև կրթական առանձնահատուկ խնդիրների հաղթահարմանը և այս երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր և ընդլայնելով նրանց սոցիալական շփումը (L. Finlay 2004, G. Whiteford, R. Pereira 2012):

Ելնելով վերոնշյալից կարող ենք հավաստել, որ ԿԱՊԿՈՒ երեխայի կրթական և սոցիալական հարմարվողականության կայացման գործընթացը կրթական առանձնահատուկ խնդիրների հաղթահարման և սովորողների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքների հաղթահարման խիստ արդիական խնդիր է, քանի որ նման համակազմի համար կարևոր մանկավարժական, սոցիալ-հոգեբանական նշանակություն ունի (Л. Акатов 2003, W. Coster, G. Frolek-Clark 2013, Մ. Արտյոնյան, Յ. Արտյոնյան, Գ. Օվյան 2018): Սույն փաստարկն ավելի է ընդգծում հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, քանի որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի դեկտեմբերին կատարված փոփոխությամբ մեր պետությունը հանրակրթության ոլորտում անցում է կատարել համընդհանուր ներառական կրթության համակարգի:

Հետազոտության նպատակն է մշակել էրգոթերապևտիկ միջամտության համալիր մոտեցումների և կրթական կարիքի հաղթահարման յուրահատուկ միջոցներ ու մեթոդներ:

Հետազոտության օբյեկտը ԿԱՊԿՈՒ երեխայի կրթական և սոցիալական հարմարվողականության կայացման գործընթացն է:

Հետազոտության առարկան ներառական կրթություն իրականացնող հաստատություններում էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների և կրթական կարիքի հաղթահարման մոդելի կիրառման միջոցներն ու մեթոդներն են:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեբանական, անձնային և ֆիզիկական առանձնահատկությունների զարգացման միջոցով առավել արդյունավետ կլինի, եթե կրթական գործընթացում կիրառվեն կրթական կարիքի հայտնաբերման, գնահատման և համակարգման

էրգոթերապևտիկ միջամտության ծրագիր, որը կներառի կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման գործողությունների համապատասխան համակարգ՝ տեղաշարժման, մանր մոտորիկայի հմտությունների, տարածության մեջ կողմնորոշման, հատուկ հարմարեցված գրենական պարագաների կիրառման միջոցով:

Ելնելով հետազոտության նպատակից, օբյեկտից, առարկայից և վարկածից՝ մեր կողմից առաջադրվել են հետազոտության հետևյալ **խնդիրները.**

1. ՈՒսումնասիրել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողների անհատական կարողությունները կրթական գործընթացում ինքնուրույն մասնակցություն ունենալու վրա և ընտրել դրանց զարգացման էրգոթերապևտիկ միջամտության արդյունավետ մեթոդներ կրթական կարիքի գնահատման և համակարգման գործընթացում:
2. Վերլուծել ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա միջավայրային անհրաժեշտ պայմանները, դասավանդման մեթոդների համապատասխանությունը ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքներին, որոնք կնպաստեն նրանց լիարժեք ինտեգրմանը ուսումնական գործընթաց:
3. Մշակել կրթության առանձնահատուկ խնդիրների և սովորողների ուսուցման, դաստիարակության բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագիր, կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման առավել արդյունավետ միջոցներ, մեթոդներ, և փորձարարական ճանապարհով հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Առաջադրված խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**.

- հատուկ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն
- բազմամասնագիտական թիմի մասնագետների և ուսուցիչների մանկավարժական աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և վերլուծություն
- հետազոտվող ԿԱՊԿՈՒ սովորողների բժշկամանկավարժական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն
- զբաղվածության կատարողականության վերլուծություն՝ ընդհանուրից մասնակի սկզբունքին համապատասխան՝ դիտարկելով գործողության կատարման ոլորտը, անձնային գործոնները և կատարողականության հմտությունները, միջավայրային պայմանները
- ֆունկցիոնալ վարքային գնահատում՝ որոշակիացնելու և սահմանելու վարքի դրսևորման հանգամանքները և կանխատեսվող հետևանքները (W. Coster 1998)
- հոգեբանամանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում
- ստուգողական փորձարկումներ

- մանկավարժական գիտափորձ՝ հաստատող, ուսուցանող
- ստացված արդյունքները ընդհանրացնող որակական և վիճակագրական մշակման մաթեմատիկական մեթոդների կիրառում (Г. Александров, А. Белогуров 1997):

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հետևյալ հիմնական գիտական սկզբունքներն ու դրույթները, որոնք հաստատվել են ընդհանուր և հատուկ մանկավարժության բնագավառում, մասնավորապես՝

- Անձի զարգացման և ձևավորման առաջատար գործունեության մասին տեսությունը (П. Гальперин, Н. Запорожец, С. Карпова 1977):
- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П. Гальперин 1976, 1985):
- Զարգացնող ուսուցման տեսությունը (В. Давыдов 1976):
- էրգոթերապևտիկ միջամտության շրջանակներում կիրառվող անձի կարողությունների և հմտությունների զարգացման համալիր մոտեցման տեսությունը (C. Forlin 2006, J.Case-Smith 2015):
- Փոխհատուցման տեսությունը (Л. Выготский 1991):

Հետազոտության գիտական նորույթը.

- ուսումնասիրվել և սահմանվել են կրթական գործընթացում ինքնուրույն մասնակցություն ունենալու ԿԱՊԿՈՒ երեխաների անհատական կարողությունները, ընտրվել են դրանց զարգացման էրգոթերապևտիկ միջամտության արդյունավետ մեթոդներ
- գնահատվել են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա միջավայրային անհրաժեշտ պայմանները և դասավանդման մեթոդների համապատասխանությունը համապատասխան մեթոդիկայի կիրառման պայմաններում
- մշակվել է ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման, դաստիարակության բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագիր, կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման առավել արդյունավետ միջոցներ, մեթոդներ, և փորձարարական ճանապարհով հիմնավորվել է դրանց արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների համար առկա միջավայրային անհրաժեշտ պայմանների և դասավանդման մեթոդների համապատասխանության տեսական հիմնավորումն է՝ զբաղվածության կատարողականության վերլուծության, կրթական առանձնահատուկ խնդիրների և սովորողների ուսուցման, բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագրի, կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման առավել արդյունավետ միջոցների, մեթոդների վերաբերյալ տեսական պատկերացումների այնպիսի ընդլայնումը, ինչը հնարավորություն կտա մշակել տեսական հետազոտությունների

արդյունքում հավաքագրված տեղեկությունները և համալրել էրգոթերապևտիկ տեսական փորձը նոր գիտահետազոտական փաստերով:

Հետազոտության գործնական նշանակությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված՝ տեղաշարժման, մանր մոտորիկայի հմտությունների, տարածության մեջ կողմնորոշման, հատուկ հարմարեցված գրենական պարագաների կիրառման և էրգոթերապևտիկ ուղղվածությամբ խաղերի կազմակերպման և անցկացման միջոցներով առաջարկվող մոտեցումների և էրգոթերապևտիկ միջամտության մեթոդների և պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ էրգոթերապևտիկ ծրագրի միջոցով: Այս աշխատանքներին ավելացվել է նաև «զգայական սենյակի» ստեղծումը, ինչը ևս էրգոթերապևտիկ միջամտության գործնական կիրառում է՝ ուշադրության կենտրոնացման և գերակտիվության խնդրի կարգավորման առումով:

Հետազոտության նյութերը, էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորման նպատակով, կիրառվել և ներդրվել են ներառական կրթություն իրականացնող Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20, Նոր Խարբերդի թիվ 2 դպրոցների կրթական գործընթացի կազմակերպման աշխատանքում և կարող են օգտագործվել դպրոցական հատուկ հաստատությունների վերականգնողական և մանկավարժական անձնակազմի կողմից, ինչպես նաև՝ մանկավարժական բուհերում սովորող ուսանողների կրթական գործընթացի կազմակերպման աշխատանքում, էրգոթերապիստների որակավորման բարձրացման համակարգում, հետագա գիտական այնպիսի հետազոտություններում, որոնք ուղղված կլինեն էրգոթերապևտիկ միջամտության կարիք ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացի կազմակերպման ուսումնասիրմանը: Այն կիրառվել է նաև Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի «էրգոթերապիա» բաժնի ուսանողների կրթական գործընթացներում՝ գործնական աշխատանքները և մանկավարժական պրակտիկան կազմակերպելիս:

Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները, մասնագիտական սեմինարների, վերապատրաստման և դասախոսությունների մշակման նպատակով, կարող են հիմք հանդիսանալ ինչպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության, այնպես էլ՝ Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող նոր հետազոտությունների և գործնական փորձի ներդրման համար:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և էրգոթերապևտիկ գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու էրգոթերապևտիկ միջամտության ուղղվածության և միջավայրային հատուկ պայմանների ստեղծման գործընթացը:
2. ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման, դաստիարակության, բազմակի կարիքների հաղթահարման և հասանելի ֆիզիկական միջավայրի ապահովմանն ուղղված էրգոթերապևտիկ միջամտության մշակված ծրագրի կիրառումը նպաստում է նրանց կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
3. Էրգոթերապևտիկ միջամտության մոդելի ներդրման հնարավորություններն, ըստ մշակված ռազմավարության, գործնական մոտեցումների կիրառմամբ նպաստում են ԿԱՊԿՈՒ սովորողների ինքնուրույն մասնակցությանը կրթական գործընթացում:

Հետազոտության արդյունքների հիմնավորումն ու հավաստիությունն ապահովված է հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութի մանրազնին վիճակագրական մշակմամբ: Երկամյա հետազոտության արդյունքները քննարկվել և զեկուցվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 2012-2018 թթ. գիտաժողովներում, ինչպես նաև, «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնի կողմից պարբերաբար կազմակերպված առաջավոր փորձը լուսաբանող գիտագործնական սեմինարների, Էրգոթերապիայի երկրորդ և չորրորդ համակովկասյան գիտաժողովի և «Էրգոթերապիստների հայկական ասոցիացիայի» կողմից կազմակերպված քննարկումների, հաշվետվությունների ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկում: Ատենախոսության թեմայով հրատարակված «էրգոթերապևտիկ միջամտությունը ներառական կրթության համակարգում» խորագրով էրգոթերապիայի լուսաբանման ուսումնաօժանդակ ձեռնարկում, 2012-2018թթ. հրատարակված գիտական հոդվածներում տեղ գտած աշխատանքային դրույթները և էրգոթերապևտիկ միջամտության աշխատանքների համար նախատեսված մոտեցումների, վարժությունների, հարմարեցված կրթական պարագաների, միջավայրային հարմարանքների մասին գործնական խորհուրդները հնարավորություն են ընձեռում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող վերականգնողական և մանկավարժական աշխատանքները դարձնել ավելի արդյունավետ, զուգակցել

դրանք սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ գործընթացների զարգացման արդյունավետ մեթոդներին:

Ատենախոսության հիմնական դրույթների հիմնավորումն ու ճշգրտությունը երաշխավորված է նաև հրատարակումներով, զեկույցներով, ստացված արդյունքների վերլուծության հրապարակային քննարկումներով և դրանք դպրոցական պրակտիկա ներդնելու փաստերով:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 166 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 10 աղյուսակ, 23 տրամագիր, 1 գծապատկեր, 2 նկար և 7 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածականում հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը:

Ատենախոսության **«Հետազոտության հիմնախնդրի դրվածքը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին գլխի՝ «Ներառական կրթության շրջափուլային զարգացման գիտատեսական վերլուծությունը» ենթագլխում լուսաբանված են կրթության և հատուկ մանկավարժության փիլիսոփայական գաղափարախոսությունը և ներառական կրթության փուլային զարգացման առանձնահատկությունները: Ներկայացված են տարբեր հեղինակների մոտեցումները ներառական կրթության սկզբունքների, արժեքների և գաղափարախոսության վերաբերյալ (M. Ainscow 1999, 2003, Մ. Հարությունյան 2014):

«Էրգոթերապևտիկ միջամտության անհրաժեշտությունը ՀՀ ներառական կրթության համակարգում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է հիմնախնդրի դրվածքը՝ կրթական բարեփոխումների շրջադարձային ժամանակաշրջանում ԿԱՊԿՈՒ երեխաների հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ներառական կրթության մոդելի ներդրման անհրաժեշտությունը Հայաստանում, որպես վերջիններիս կրթական գործընթացի կազմակերպման կարևորագույն նախապայման:

«ԿԱՊԿՈՒ երեխաներին մատուցվող էրգոթերապևտիկ ծառայության առանձնահատկությունները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են

«Էրգոթերապիա» մասնագիտության հիմնարար մոտեցումները և սկզբունքները, ինչպես նաև «անձ–միջավայր-զբաղվածություն» համատեքստում իրականացվող միջամտության այն ուղղությունները, որոնք նպատակաուղղված են սովորողի կրթական գործունեության բարելավմանը և այդ գործընթացում վերջինիս ներգրավվածության ապահովմանը (M. Law, G. King, D. Russell 2005): Հիմնավորված է Էրգոթերապևտիկ միջամտության այնպիսի մոդելի ստեղծումը, որը կունենա ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեբանական, անձնային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման համալիր ծրագիր (M. Orentlicher 2013, J. Case-Smith 2015):

«ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման և կրթական միջավայրի գնահատման առանձնահատկությունները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում» խորագրով չորրորդ ենթագլխում հիմնավորված է ներառական կրթության իրականացման գործընթացում համընդգրկուն էրգոթերապևտիկ գնահատման միջոցառումների կարևորությունը՝ միջավայրային պայմանների ուսումնասիրման, մասնագետների վերապատրաստման, առանձնահատուկ գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի կիրառման միջոցով ապահովելու «կրթական կարիքներին համահունչ» և «անհրաժեշտ» աջակցություն (R. Cohen, M. Swerdlik 2010, L. Rens, A. Joosten 2014):

«ԿԱՊԿՈՒ սովորողներին ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության համալիր մոտեցումների ուսումնասիրությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում» խորագրով ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Հետազոտության հիմնավորումը, խնդիրները, մեթոդները, կազմակերպումը և աշխատանքի փուլերը» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված են դիտարկվող հիմնախնդրի՝ էրգոթերապևտիկ միջամտության կարիք ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաներին կրթական գործընթաց ներգրավելու համալիր մոտեցումները՝ ընդլայնելով նրանց մասնակցությունն անհատական կարողությունների զարգացման, կրթական հասանելի միջավայրային պայմանների ստեղծման միջոցով, ինչպես նաև, հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները: Ատենախոսության այս ենթաբաժնում իրականացված հետազոտությունն ամբողջությամբ ներկայացված է մի քանի փոխկապակցված փուլերով:

«Բազմապրոֆիլ ծառայությունների մատուցումը և հասանելի կրթական միջավայրի ապահովումը որպես էրգոթերապևտիկ մոդելավորման կարևորագույն նախապայման» խորագրով երկրորդ ենթագլխում ուսումնասիրել ենք բազմապրոֆիլ ծառայությունների դերը ներառական կրթության համակարգում և վերլուծել ուսումնաօժանդակ անձնակազմի (85 ուսուցիչ, 143 բազմամասնագիտական թիմի անդամներ) կողմից կիրառվող վերականգնողական և շտկողական աշխատանքների ուղղվածությունը ներառական դպրոցներում: Արդյունքում, վեր է հանվել լրացուցիչ

ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, հատկապես, ԿԱՊԿՈՒ երեխաների ֆիզիկական կարողությունների ինքնասպասարկման հմտությունների ուսուցման և զարգացման, դպրոցի միջավայրային պայմանների բարելավման, տեղափոխման դժվարությունների հաղթահարման ուղղությամբ (Տրամագիր 1):



Տրամագիր 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների հաղթահարման և նրանց կրթական գործունեության արդյունավետության բարձրացման լրացուցիչ ծառայությունների գնահատումը

Անցկացրել ենք դասապրոցեսի դիտարկում, հարցազրույց ուսուցիչների և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ, ֆոկուս խումբ քննարկումներ, հարցաթերթիկային հարցումներ ՀՀ՝ թվով 20 դպրոցներում: Ուսումնասիրել և վերլուծել ենք ներառական կրթության կազմակերպման ընթացքում առկա խնդիրները, միջավայրային նպաստավոր և անբարենպաստ պայմանները:

«Բազմամասնագիտական թիմի աշխատակիցների տեղեկացվածության հետազոտումը էրգոթերապևտիկ միջամտության կազմակերպման գործընթացում» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է ներառական կրթության համակարգում աշխատող 68 բազմամասնագիտական թիմի անդամների, 85 ուսուցիչների և 118 բարձր կուրսի ուսանողների իրազեկման մակարդակը էրգոթերապևտիկ միջամտության ուղիների վերաբերյալ, մասնագետների կողմից ԿԱՊԿՈՒ սովորողներին մատուցվող աջակցության ուղղվածությունը, սովորողների անհատական կրթական կարիքների հաղթահարման մոտեցումների և մեթոդների ընտրության սկզբունքը, էրգոթերապևտիկ միջամտության կիրառման անհրաժեշտությունը և հիմնական ուղղվածությունը ներառական դպրոցներում, կրթական միջավայրի նպաստավոր և խոչընդոտող գործոնները:

Համաձայն հարցման արդյունքների, ԲՄԹ մասնագետներից շատերը (32.4%) հստակ նշել են իրենց կողմից կիրառվող մասնագիտական մոտեցումները և մեթոդները՝ առանձնացնելով զարգացնող խաղերը, ժամանցի կազմակերպման անհատական կամ խմբային պարապմունքները: Սակայն հարցված մասնագետների մեծ մասը (41.2%) դժվարացել է ինքնասպասարկման և արտադասարանային գործողությունների աջակցմանն ուղղված որևէ մոտեցում նշել: Ուսուցիչների մեծամասնությունը (69.4%) տեղեկացված չէր և

դժվարանում էր նշել լրացուցիչ այլ մոտեցումներ, որոնք հնարավորություն կտային զարգացնել և ապահովել հնարավորինս ինքնուրույն մասնակցություն վերոնշյալ ոլորտներում: Այս հարցի վերաբերյալ ուսանողների տեղեկացվածության աստիճանը համեմատաբար ավելի ցածր էր և կազմում էր 12.7%:

Հասանելի կրթական միջավայրի, հարմարեցումների վերաբերյալ իրականացված տեղեկացվածության ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ԲՄԹ անդամները (67.6%), ուսուցիչները (67.1%) և բարձր կուրսերի ուսանողները (56.8%) բավականաչափ տեղեկացված են այն հարմարեցումների և միջավայրային պայմանների մասին, որոնք անհրաժեշտ են դպրոցում սովորողների մուտքը և մասնակցությունը կրթական գործընթացում ապահովելու համար: Սակայն, վերոնշյալ համակարգը, մասամբ էր տեղեկացված այլ ենթակառույցների հարմարեցման համար նախատեսված մոտեցումների՝ մասնավորապես, սանհանգույցի, զուգարանակոնքի, ճաշարանի, սպորտդահլիճի և հասանելի կրթական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ այլ հարմարեցումների մասին:

«Ներառական կրթության կազմակերպման գործընթացում իրականացվող Էրգոթերապևտիկ միջամտության հետազոտման արդյունքների վերլուծություն» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված հետազոտման արդյունքների հիման վրա կարելի է հաստատել, որ ՀՀ կրթական համակարգում՝ ներառական կրթության կազմակերպման գործընթացում դեռևս նկատվում են խնդիրներ, որոնք խոչընդոտում են ԿԱՊԿՈՒ սովորողների ինքնուրույն և արդյունավետ մասնակցությանը կրթական գործընթացին: Այդ նպատակով, հետազոտության ընթացում, գնահատելով սովորողին տարբեր պայմաններում և իրավիճակներում, մեր կողմից դիտարկվել են նրանց՝ **կրթական գործընթացում մասնակցության աստիճանը**, **կրթական ծրագրի յուրացման առանձնահատկությունները, ներգրավվածությունն արտադասարանային գործողություններին և ինքնուրույն մասնակցությունն անհատական խնամքի գործողություններում:**

Արդյունքում պարզ է դարձել, որ հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող սովորողները (37.8%) չեն կարողանում կատարել նուրբ շարժունակությանը վերաբերող գործողություններ: Նրանցից շատերը (51.4%,) չեն կարողանում ինքնուրույն մոտենալ և գրել գրատախտակին և դժվարություն ունեն (64.9%) ազատ ժամանակի կազմակերպման կամ ժամանցային տարբեր իրավիճակներում, դասամիջոցին իրականացվող խաղային գործողություններին մասնակցելիս: **Ինքնասպասարկման գործողությունների կատարողականության գնահատման** տվյալների համաձայն, հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող սովորողներից շատերը (62.2%) մշտապես կարիք են ունեցել աջակցության և օգնության: Նրանց մեծամասնությունը՝ (83.8%), չի կարողացել ինքնուրույն օգտվել սանհանգույցից, ինչը պայմանավորված է եղել ինչպես համապատասխան հմտությունների բացակայությամբ, այնպես էլ՝ միջավայրային պայմանների անհարմարությամբ: Մանկական աուտիզմ,

ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտների ինքնասպասարկման գործունեության ցուցանիշները դպրոցում համեմատաբար ավելի բարձր են եղել (47.7%, 69.0%), քանի որ այս խմբի աշակերտները, հիմնականում չեն ունեցել շարժողական խնդիրներ, միջավայրային պայմանները համապատասխանել է նրանց ֆիզիկական կարողություններին (Տրամագիր 2):



Տրամագիր 2. Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող սովորողների ինքնասպասարկման գործողությունների գնահատումը

Գրավոր գործընթացի ուսումնասիրության արդունքներն այլ են եղել մանկական աուտիզմ ունեցող սովորողների մոտ: Չնայած նրանց մեծ մասը՝ (52.2%), ուսուցիչների կամ աջակցող անձնակազմի օգնությամբ, կարողացել է օգտագործել գրենական պարագաները, սակայն մյուսները՝ (31.8%) դժվարություններ են ունեցել գրենական պարագաների կիրառման գործընթացում: ՈՒշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ ունեցող սովորողների գրավոր գործընթացի դժվարությունները, հիմնականում, պայմանավորված են եղել նրանց վարքային դրսևորումներով, ինչի արդյունքում դժվարացել են կենտրոնացնել իրենց ուշադրությունը գրավոր աշխատանքների կատարման վրա, իրականացնել ղեկավարելի և համակցված շարժումներ:

Ֆունկցիոնալ շարժունակության, հաղորդակցման և արտադասա-րանային գործունեությունում ունեցած մասնակցության հետազոտության տվյալների համաձայն մանկական աուտիզ ունեցող երեխաների միայն մի մասն է (27.3%) կարողացել ինքնուրույն մոտենալ գրատախտակին և գրել, իսկ մյուսներն (38.6%) ունեցել են այդ գործողության կատարման դժվարություններ՝ պայմանավորված ճանաչողական, վարքային խնդիրներով: Իսկ ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտները, հիմնականում, կարողացել են ինքնուրույն բարձրանալ և իջնել աստիճաններով (89.7%) և, մեծամասամբ, (69.0%) ինքնուրույն տեղաշարժվել դպրոցում: Ատենախոսության՝ **«Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը որպես ԿԱՊԿՈՒ սովորողների աջակցության և կրթական հնարավորությունների զարգացման հիմք»** խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Ներառական կրթության կազմակերպման գործընթացում իրականացվող էրգոթերապևտիկ միջամտության ձևերը և ուղղությունները» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված են մեր կողմից առաջարկվող էրգոթերապևտիկ միջամտության ռազմավարական պլանը և միջամտության գործընթացի փոխկապակցված փուլերը, մշակված և ներդրված ծրագրին համապատասխան էրգոթերապևտիկ միջամտության մոդելը և գործունեության արդյունավետության ապահովման նպատակով կիրառված հետևյալ տեսանելի, ֆունկցիոնալ և չափելի բաղադրիչները (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Էրգոթերապևտիկ միջամտության գործընթացի բաղադրիչներ

Բաղադրիչ	Նկարագրություն	Օրինակ
Ո՞վ	Գործողություն կատարող անձը	Սովորողը
Ի՞նչ	Կրթական գործողությունը	Կկարողանա տեղափոխվել սպորտսրահ և մասնակցել դասին
Ինչպե՞ս	Կատարման ձևը	Ինքնուրույն
Առաջընթացի գնահատում	Առաջընթացի գնահատման ձևը	Հասնել սպորտսրահ, մասնակցել դասին
Ժամանակա-հատված	Նպատակի վերջնաժամկետը	Մեկ ուսումնական տարվա ընթացքում
Գնահատում	Գնահատման պատասխանատուն	Ուսուցիչ

«Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են մեր կողմից մշակված էրգոթերապևտիկ միջամտության մոդելով սահմանված գործառույթները, դասապրոցեսի կազմակերպման և ԿԱՊԿՈՒ սովորողի կրթական գործընթացում հնարավորինս ինքնուրույն մասնակցության ընդլայնման համար նախատեսված էրգոթերապևտիկ միջոցառումները և գործնական աշխատանքները, միջավայրային պայմանների հարմարեցման մոտեցումներ, էրգոթերապևտիկ միջամտության գործնական մոտեցումների կիրառման համեմատական վերլուծությունը: Արդյունքում, կարող ենք նշել, որ մեր կողմից առաջարկված էրգոթերապևտիկ միջամտության ուղիների, միջավայրային անհրաժեշտ պայմանների և դասավանդման մեթոդների համապատասխանության ապահովումն, ակնհայտորեն հնարավորություն են ընձեռնել զարգացնել ԿԱՊԿՈՒ սովորողների կարողությունները և ընդլայնել նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, խուսափել դասապրոցեսի կազմակերպման ձախողումներից,

հնարավորինս արդյունավետ ներգրավել նրանց դպրոցում իրականացվող գործընթացներին և ունենալ համախմբված դասարան (Տրամագիր 3):



Տրամագիր 3. Էրգոթերապևտիկ միջամտության գործնական մոտեցումների կիրառման համեմատական վերլուծությունը

«Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը որպես ԿԱՊԿՈՒ սովորողների համակողմանի զարգացման և հասարակական կյանքում լիարժեք ներգրավվելու միջոց» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են Էրգոթերապևտիկ միջամտության մոդելի շրջանակներում անցկացված հաստատող գիտափորձերի և մեկամյա (2014-2015) ուսուցանող մանկավարժական գիտափորձի հիմնական ուղղությունները: Հաստատող գիտափորձով որոշվել է վերականգնողական ծառայությունների մատուցման ձևը, միջամտության հաճախականությունը, տևողությունը, միջամտության վայրը, որոնք, ըստ մշակված ծրագրի, հնարավորություն են տվել աջակցելու և խթանելու ԿԱՊԿՈՒ սովորողների մասնակցությունն այն նպատակային և իմաստալից գործունեությանը, ինչը կարևոր և նշանակալից է նրանց կրթական ծրագրի յուրացման, ակնկալվող կրթական նպատակներին համապատասխան վերջնարդյունքներին հասնելու, ամենօրյա գործողությունների կատարման համար:

ԿԱՊԿՈՒ սովորողների ֆունկցիոնալ շարժունակության հմտությունների զարգացման և կրթական միջավայրում համապատասխան աջակցության հատկացման նպատակով, մեր կողմից նախագծվել և ձեռք են բերվել

միջավայրային մի շարք հարմարեցումներ և իրականացվել են էրգոթերապևտիկ միջամտության գործնական աշխատանքներ:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ԿԱՊԿՈՒ սովորողների ինքնասպասարկման հմտությունների զարգացման և դրանց կատարողականության բարելավման նպատակով իրականացված էրգոթերապևտիկ միջամտությունն իրականացվել է հետևյալ ուղղությամբ.

- տեղաշարժման խնդիրների հաղթահարում
- ֆունկցիոնալ հմտությունների զարգացում
- հարմարեցված պարագաների տրամադրում:

Ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումները մեր կողմից հիմնականում կազմակերպվել և իրականացվել են «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում՝ հարմարեցված սպասքի և խնամքի պարագաների կիրառմամբ, էրգոթերապևտիկ միջամտության շրջանակներում նախագծելով և պատրաստելով անհատական պարագաներ, ինչպես նաև՝ ներառելով այս երեխաներին խոհարարական հմտությունների զարգացման թերապևտիկ միջամտության աշխատանքներում:

Մեր կողմից իրականացված էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորման գիտափորձի արդյունքների՝ գիտափորձից առաջ և հետո, համեմատական վերլուծության արդյունքում, պարզ է դարձել, որ համադրելով էրգոթերապևտիկ միջամտության հիմք հանդիսացող կենսամեխանիկական, նյարդազարգացողական և զգայական ինտեգրման աշխատանքային կառուցվածքների մոտեցումները և միջամտության ուղիները, ինչպես նաև կիրառելով այցելուակենտրոն մոտեցման սկզբունքները, հնարավոր է եղել արձանագրել դրական փոփոխություններ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործունեության մեջ ինքնուրույն մասնակցություն ունենալու գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գրականության վերլուծությունը, վիճակագրական ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառումը, փաստացի փորձարարական նյութի մանրազնին մշակումը, անցկացված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը, գիտական նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցումները և մեր կողմից իրականացված աշխատանքի ծավալը թույլ են տալիս կատարել հետևյալ հետևությունները.

- Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում է էրգոթերապևտիկ միջամտության ձևերի և մեթոդների կիրառումը, որոնց ներդրման և համապատասխան մեթոդիկայի կիրառման պայմաններում հնարավոր է ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լիարժեք ինտեգրումը կրթական գործընթաց:
- Ատենախոսությունում մշակված և ներկայացված են կրթական գործընթացում ինքնուրույն մասնակցություն ունենալու՝ ԿԱՊԿՈՒ սովորողների անհատական կարողությունների գնահատման և նրանց կարիքների սահմանման ուղիները, որոնք թույլ են տալիս ընտրել էրգոթերապևտիկ միջամտության արդյունավետ մեթոդներ:
- Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ԿԱՊԿՈՒ սովորողների հոգեբանական, անձնային և ֆիզիկական առանձնահատկությունների ուսումնասիրման առումով ներառում է մեր կողմից մշակված համալիր ծրագիր՝ հաշվի առնելով նրանց զարգացման առանձնահատկությունները:
- ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման, դաստիարակության բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագրի կիրառումը առավել արդյունավետ միջոցն է հանդիսանում կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման համար:
- Որպես ներառական հաստատություններում իրականացվող աշխատանքների բացառիկ նոր մոտեցում՝ էրգոթերապևտիկ միջամտության ընթացքում իրականացված հատուկ մասնագետների սերտ համագործակցության և խորհրդատվության արդյունքում մշակվել են ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու առավել նպաստավոր և սոցիալական միջավայրում հարմարվելու ուղիներ և մոտեցումներ:
- Էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների և յուրահատուկ մոդելի կիրառումը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, նպատակաուղղված աջակցության շնորհիվ, հնարավորություն տվեց 36%-ով բարելավել ԿԱՊԿՈՒ սովորողների մասնակցությունը կրթական գործընթացում և ամենօրյա զբաղվածության գործողություններում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվել է հետևյալ հրապարակումներում.

1. Հարությունյան Զ. Վ., Հովյան Գ. Ռ. Բազմամասնագիտական թիմային աշխատանքը որպես ներառական կրթության արդյունավետ

կազմակերպման նախապայման. «Մանկավարժություն» Գիտամեթոդական ամսագիր # 7, 2013թ, էջ 21-25
2. Հարությունյան Զ. Վ. Էրգոթերապևտիկ միջամտությունը դպրոցում. մասնագիտական աջակցության ապահովում կրթական միջավայրում. «Մանկավարժություն» Գիտամեթոդական ամսագիր # 3, 2015թ, էջ 25-31
3. Հարությունյան Զ. Վ. Հասանելի կրթական միջավայր ապահովելու էրգոթերապևտիկ միջամտության ուղիները. «Ներառական կրթություն. Ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2015թ, էջ 48-51
4. Հարությունյան Զ. Վ. Էրգոթերապևտիկ միջամտությունը ներառական կրթության համակարգում. **Ուսումնագործնական Ձեռնարկ,** Հեղինակային հրատարակություն 2015թ, ՀՏԴ 615.8:159.9:37.01 (07) ԳՄԴ 53.5+88+74.00 y7 Հ 422 ISBN 978-9939-0-1308-4 © 48 էջ
5. Հարությունյան Զ. Վ., Հովյան Գ.Ռ. Ծնողների հետ համագործակցում որպես ներառական կրթության արդյունավետության նախապայման. «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում 21-րդ դարի մարտահրավերները. Կանխման և հաղթահարման ուղիները» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2016թ, էջ 110-115
6. Հարությունյան Զ. Վ., Հովյան Գ. Ռ. Կրթության կազմակերպումը ներառականության համատեքստում. «Մանկավարժական միտք» Տաթև գիտակրթական համալիր, Զանգակ հրատարակչություն, 4 (71) 2018թ, էջ 15 – 21
7. Арутюнян З. В., Овян Г. Р., Арутюнян М. Р. Педагогическая реабилитационная поддержка как предпосылка организации эффективного инклюзивного образования. Приоритеты педагогики и современного образования, Сборник статей Международной научно-практической конференции, Пенза, 2018г Издательство: Мцнс «Наука и просвещение». Ст.300 – 302, РИНЦ
8. Harutyunyan Z. V. Challenges of children with special educational needs while performing self-care activities in inclusive schools. Современное образование: актуальные вопросы, достижения и инновации. Сборник статей XV Международной научно-практической конференции, Пенза, 2018 Издательство: Мцнс «Наука и просвещение». Ст.148 – 151 РИНЦ
9. Harutyunyan Z. V. The importance of Occupational Therapy among multidisciplinary services in inclusive school. Наука и образование: Сохраняя прошлое, создаем будущее. Сборник статей XV Международной научно-практической конференции. Пенза, 2018 ЧАСТЬ 2 Издательство: Мцнс «Наука и просвещение». Ст.51 – 53, РИНЦ

АРУТЮНЯН ЗАРУИ ВАРДАНОВНА

МОДЕЛИРОВАНИЕ ЭРГОТЕРАПЕВТИЧЕСКОГО ВМЕШАТЕЛЬСТВА В ИНКЛЮЗИВНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01.-“Теория и история педагогики” (Специальная педагогика).

Защита диссертации состоится 12 декабря 2019 г., в 12:00 на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В настоящее время инклюзивное образование рассматривается как процесс, который непосредственно направлен на осуществление множественных образовательных и воспитательных нужд детей с особыми образовательными потребностями. Принимая во внимание тот факт, что инклюзивное образование в Армении находится в процессе развития, и есть реальная необходимость в изыскании, разработки и внедения новых подходов в данной сфере, моделирование вмешательства в области эрготерапии в инклюзивных школах, будет способствовать улучшению социальной реабилитации учащихся. Поэтому подбор, разработка и систематизация средств, методов и форм эрготерапевтического вмешательства, станет основой осуществления полной интеграцию детей с особыми образовательными потребностями в учебный процесс, что в корне будет отличаться от работы, которая на сегодняшний день проводится в инклюзивных школах (M. Ainscow, A, Howes, P. Farrell, J. Frankham, AOTA 2015b, M. Арутюнян 2017). Вышеизложенное и определяет актуальность исследования, ее теоретическую, практическую и социальную значимость.

Цель исследования – разработать комплексные подходы эрготерапевтического вмешательства, специальные средства и методы для осуществления образовательных нужд детей с особыми образовательными потребностями.

Задачи исследования:

1. Изучить и оценить индивидуальные способности учащихся с особыми образовательными потребностями и выбрать эффективные методы эрготерапевтического вмешательства для развития этих способностей.

2. Проанализировать существующие условия окружающей среды и соответствие методов обучения нуждам детей с особыми образовательными потребностями в инлкюзивных школах.

3. Разработать комплексную программу по эрготерапии, эффективные средства и методы для организации учебного процесса, и социальной адаптации детей с особыми образовательными потребностями и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

- Изучены и определены индивидуальные возможности детей с особыми образовательными потребностями для участия в образовательном процессе, а также выбраны эффективные методы эрготерапевтического вмешательства для их развития.
- Оценены необходимые условия окружающей среды и актуальность методов обучения при применении соответствующей методологии в инклюзивных школах.
- Разработаны и экспериментально обоснованы комплексная программа по эрготерапии для обучения и воспитания детей с особыми образовательными потребностями и наиболее эффективные средства, методы и подходы для развития образовательного процесса и социальной адаптации.

Теоретическая значимость исследования определяется расширением теоретических концепций комплексной программы по эрготерапии, как наиболее эффективного средства развития образовательного процесса и социальной адаптации детей с особыми образовательными потребностями, которое позволит облегчить процесс сбора информации в результате теоретических исследований и дополнить теоретическую базу эрготерапии результатами новых научных исследований.

Практическая значимость исследования определяется разработкой и внедрением средств, методов и условий эрготерапевтического вмешательства, направленных на повышение эффективности организации процесса обучения детей с особыми образовательными потребностями в инклюзивных школах.

Апробация исследования. Основные положения, результаты и выводы работы обсуждались в период с 2012 по 2018гг. на совместных заседаниях кафедр «Логопедии и реабилитационной терапии», «Специальной педагогики и психологии» АГПУ им. Х. Абовяна, в инклюзивной школе N 20 имени Джона Киракосяна, в школе N 2 Нор Харберда, а также в специализированном детском доме Харберда.

Структура и объем диссертации. Содержание диссертации изложено на 166 страницах компьютерного текста, включает введение, 3 главы, выводы, список использованной литературы и приложения. Текст диссертации включает 10 таблиц, 23 диаграммы, 1 фигуру, 2 рисунка, 7 приложений.

ZARUHI V. HARUTYUNYAN
MODELING OF OCCUPATIONAL THERAPY INTERVANTION IN THE INCLUSIVE SCHOOL

Thesis submitted for the degree of candidate of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.01 – "Theory and history of pedagogics" (Special pedagogy)

The defense of the dissertation will take place on 12th of December, 2019, at 12:00 at the meeting of the specialized pedagogical committee "Pedagogy", 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: 17, Tigran Mets avenue, 0010, Yerevan, Armenia).

SUMMARY

Relevance of the study: Nowadays the inclusive education considered as a process which directly addressed the special educational needs of children for overcoming multiple educational and social problems. Taking into consideration that inclusive education in Armenia is in the process of development and there is a need for extensive studies and implementation of new approaches in this field, in our opinion the modeling of occupational therapy intervention in the inclusive schools will contribute and enhance the social rehabilitation of the learners. For this purpose, special attention should be paid to the choice of occupational therapy methods and forms, which, with the use of appropriate methodology will support the full integration of children with special educational needs in educational process and will be fundamentally different from the work that is currently provided in inclusive schools (M. Ainscow, A, Howes, P. Farrell, J. Frankham, AOTA 2015b, M. Harutyunyan 2017):

The aim of the study is to develop comprehensive occupational therapy intervention approaches and special methods and means for overcoming educational needs of children with special educational needs.

Objectives of the study:

1. To study and evaluate individual capacities of the learners with special educational needs for independent participation in the educational processes and to select occupational therapy intervention effective methods for developing that capacities.
2. To analyze existing necessary environmental conditions and appropriateness of teaching methods to the requirements of children with special educational needs, which will promote their full integration into the learning process.

3. To develop a comprehensive occupational therapy program and more effective tools and methods of educational process and social adaptation to overcome special educational problems and teaching needs of the learners, and experimentally justify their effectiveness.

The scientific novelty of the study is determined by:

- The individual capacities of children with special educational needs to participate in the educational process have been studied and defined, and effective methods of occupational therapy intervention for their development have been selected
- The necessary environmental conditions and the relevance of teaching methods in the application of appropriate methodology in the schools of inclusive education were assessed.
- Complex occupational therapy program for the training of learners with special educational needs and overcoming the multiple needs of education has been developed, and the most effective tools, methods, and techniques for developing the educational process and social adaptation have been experimentally justified.

The theoretical significance of the study is in expansion of theoretical concepts of the complex occupational therapy program, the most effective means for development of the educational process and social adaptation which will enable to the process of gathering information as a result of theoretical research and to complement the occupational therapy theoretical experience with new scientific research findings.

The practical significance of the study is determined by the practical significance of the research which consist of the development of occupational therapy intervention practical methods and conditions aimed at enhancing the effectiveness of the organization of education for children with special educational needs in the schools of inclusive education and their contribution to the pedagogical process through an occupational therapy program.

Approbation of the study: The main statements, results and conclusions of the work were discussed at the joint meetings of the chair of "Special Pedagogy", and later on the chair of "Speech and Rehabilitation Therapy" of ASPU after Kh. Abovyan (2012-2016); on pedagogical councils of #20 inclusive school named after John Kirakosyan, school #2 Nor Kharberd, and in Specialized Children's Home of Kharberd orphanage during 2012-2018.

Structure and scope of the dissertation: The work is presented on 166 pages of computer text and consists of introduction, 3 chapters, conclusion, a list of used literature and an appendix. The body of dissertation includes 10 tables, 23 diagrams, 1 figure, 2 pictures, and 7 appendixes.